

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին ուղարկել Ամերիկայում վախճանուած Սահակ Կօշկարեանի կտակի բնագիրը, որով իւր մահից յետոյ մնացած բոլոր դրամը թողել է Կ. Պոլսի Ս. Փրկչի ազգային հիւանդանոցին, որպէս զի ուղարկուի Ամերիկայի Ազգային վարչութեան՝ այդ գումարը գանձելու համար։ 28 ապրիլի, թ. 687։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ատրպատականի Կենդրոնական Դպրոցի Հոգաբարձութեան ուղարկել Նորին Վեհափառութեան այդ դպրոցի ծրագիրն և կանոնագրութիւնն ու նախահաշիւը։ 29 ապրիլի, թ. 693։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Մինօղին Կորոպտեղի Հայոց եկեղեցական-ծխական դպրոցի դպրոցական Ֆոնդի օգտին հանդանակած 14 ռուբլի 43 կոպ. գումարը։ 30 ապրիլի, թ. 701։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովին շուտով կազմել տալ նոր վեհարանի շուրջը պարսպապատելու նախագիծն ու նախահաշիւը և ներկայացնել Նորին Վեհափառութեան ի տնօրէնութիւն։ 30 ապրիլի, թ. 702։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Մայր Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովին Տ. Ռուբէն աբեղային նոյն Յանձնաժողովի անդամ կարգելու մասին, որի մասին տեղեկութիւն տրուեց նաև Տ. Ռուբէն աբեղային։ 3 մայիսի, թ. 717։

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի Տպարանի վարչութեան ճաւա կղզու Սուրբայիա քաղաքի «Զոհրապ-Մեսրոպ և Ընկ.» նուիրած մի ֆունտ ստերլինգի փոխանակագիրը։ 5 մայիսի, թ. 725։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ուստրի Հայոց Կենդրոնական Վարչութեան կարգադրել, Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի տուած տեղեկութեան համաձայն, որ Սահակ վարդապետ Սարգսեանը Ամերիկայի եկեղեցիներում ոչ մի պաշտօն չվարէ։ 5 մայիսի, թ. 727։

Կոնդակ օրհնութեան Վրաստանի Հայոց թեմի Սուրամ աւանի Հայոց եկեղեցական-ծխական դպրոցի Յոբելենական Յանձնաժողովի անունով՝ դպրոցի 50-ամեայ յոբելեանը կատարելու առթիւ։ 6 մայիսի, թ. 731։

Կոնդակ օրհնութեան Նոր-Նախիջևանի ս. Աստուածածին եկեղեցու երեսփոխան Յովհաննէս Միքայէլեան Զայլախեանցի անունով՝ նորա օգտաւէտ բազմամեայ գործունէութեան առթիւ, թեմի առաջնորդի միջնորդութեան համաձայն։ 7 մայիսի, թ. 739։

Դիւանի գրութեամբ յայտնուեց դոքտոր Վահրամ Թորգոմեանին Նորին Սրբութեան գոհունակութիւնն ու օրհնութիւնն իւր կազմած «Երեմիա Չելէպի» գիրքը նուիրարերելու առթիւ։ 8 մայիսի, թ. 744։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վանայ առաջնորդական տեղապահին Սերերբենիկեանի կոակագումարի տոկոսները ստանալու համար անշուշտ մի ամիս առաջ յայտնել ս. Էջմիածնի Սինոդին, թէ ո՞ւմն է տրուելու, որպէս զի Սինոդը հնարաւորութիւն ունենայ մինչև մատնացոյց արած մարդու գալը հարկաւոր ձեւականութիւնները կատարել, հակառակ դէպքում այդ տոկոսները կուղարկուեն Կ. Պոլսի Պատրիարքին, դուրս գալով այդ գումարից նաև դրամի փոխադրութեան ծախքը: 8 մայիսի, թ. 745:

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ հաստատուեց և վերադարձուեց ս. Էջմիածնի Սինոդին Մայր Աթոռի և միւս հոգևոր հաստատութիւնների 1913 թ. նախահաշիւները: 10 մայիսի, թ. 749:

Կոնդակով հաստատուեցան Երևանի թեմի դպրոցական ֆոնդի ցանձնաժողովի պաշտօնում:—տիկ. Մարիամ Միրզոյեան, Մարգարիտ Շահնազարեան, Վարդուհի Էսապեան, Թերեզա Յովհաննիսեան, Մաքրուհի Ա.Ֆիրիկեան, Հեղինէ Խուդաբաշեան, օր. Նորա Հասան-Ջալալեան, Եւդինէ Տէր-Սարգսեան և պ. պ. Գրիգոր Տէր-Խաչատրեան, Գէորգ Ա.Ֆիրիկեան, Յովհաննէս Մելիքեան, Սիրական Տէր-Մարտիրոսեան, Մկրտիչ Մուսինեան, Հայրապետ Գաբրիէլեան, Ալէքսանդր Ալիզեան և Գեղէոն Ա.Հարոնեան: 8 մայիսի, թ. 761:

Կոնդակ Տ. Սահակ վարդապետ Ամատունու, Տ. Մամբրէ քահանայ Տէր-Պողոսեանի, պ. պ. իշխան Նիկոդիմոս Ամատունու, Սահակ Թորոսեանի, Արիստակէս Աւագեանի, Արամ Աղաջանեանի, Մեսրոպ Գիւլնազարեանի, Վահան Ամատունու և Շահիջան Աբրահամեանի անունով, որոնք Երևանի փոխ-թեմական միջնորդութեան համաձայն, Հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանը յաւերժացնելու առթիւ, հաստատուեցին Օշականի եկեղեցական-ծխական դպրոցի նոր շէնք կառուցանելու ցանձնաժողովի անդամութեան պաշտօնում: 12 մայիսի, թ. 766:

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդի շուտափոյթ տնօրէնութեան Մայր Տաճարի վերանորոգութեան Յանձնաժողովի կազմած նոր վեհարանի շուրջը պարսպապատելու նախահաշիւն ու նախագիծը: 12 մայիսի, թ. 770:

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին ի գործադրութիւն Նորին Սրբութեան հաստատած մատենադարանի և ընթերցարանի կանոնները: 14 մայիսի, թ. 774:

Կոնդակով առաջադրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին պահանջել Ս.-Պետերբուրգի Պետական Դրամատան գրասենեակից հանգուցեալ բժ. Ալէքսանդր Տէր-Յարութիւնեանի գրասենեակում պահ դրած բոլոր արժէթղթերն ու դրամները և կարգադրել, ինչ որ անհրաժեշտ է: 16 մայիսի, թ. 775:

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Բրմանստանի Ռանգուն քաղաքի Համբարձում քահանայ Վարդանեանի դիւանապետ Բագրատ վարդապետի անունով ուղարկած դպրոցական ֆոնդի օգտին երկու և կէս անգլիական ոսկու փոխանակագիրը: 17 մայիսի, թ. 778:

Կոնդակով պատուիրուեց ս. Էջմիածնի ս. Սինոդին տալ Հայ տպագրութեան 400-ամեայ Յոբելեանի Մայր Աթոռի Յանձնաժողովին վեց հարիւր ռուբլի Մայր Աթոռի մատենադարանի կարևոր ձեռագրերի և գիտական ժողովածուի հրատարակութեան ծախքերը հոգալու համար: 20 մայիսի, թ. 790:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Նիւ-Եօրքի Հայոց եկեղեցու հոգաբարձութեան բացատրութիւն պահանջել Մատթէոս քահանայ Մանիկեանից՝ մեծի պահոց օրերին պսակի ս. խորհուրդ կատարելու համար և այդ բացատրութիւնը ներկայացնել Նորին Սրբութեան ի տնօրէնութիւն: 20 մայիսի, թ. 792:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին մանրամասն տեղեկութիւն ժողովել Եկատերինէ Նազիրեանի կտակի գործի դատավարութեան ընթացքի մասին և շուտով ներկայացնել Նորին Սրբութեան։ 21 մայիսի, թ. 797։

Կոնդակով առաջադրուեց ս. Էջմիածնի Սինօդին կարգադրել արտասահման ուսանելու դնալու համար արձակել Մայր Աթոռի հիւրընկալ Տ. Աբել աբեղային այդ պաշտօնից և նորա տեղը կարգել Տ. Վրթանէս աբեղային և յանձնել նոր հիւրընկալին հիւրատան եղած բոլոր կահկարասին ու իրեղէնները։ 21 մայիսի, թ. 798։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Մայր Աթոռի Տպարանի վարչութեան ստանալ, իսկ Աբել աբեղային՝ յանձնել սորա մօտ եղած տպարանի հաշիւները, գործերը և դրամները։ 21 մայիսի, թ. թ. 799, 800։

Կոնդակ օրհնութեան Եգիպտահայ Ցարութիւն Սեթեանի անունով՝ նորա գրական և մանկավարժական գործունէութեան 40-ամեայ յոբելեանի կատարման առթիւ։ 22 մայիսի, թ. 805։

Նորին Վեհափառութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին՝ արտօնել Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի առաջնորդին նահանգապետի հաճութիւնը ստանալուց յետոյ հրաւիրել կոնսիստորիայի համար անդամ մի քահանայ իւր թեմից տարեկան 800 բուբլի ռոճկով, համաձայն Սինօդի որոշման։ 24 մայիսի, թ. 807։

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին անկորուստ պահելու, Վլադիկաւկազցի Միքայէլ Ստեփանեանցի ներկայացրած Եփրեմ կաթուղիկոսի 1810 թ. ձեռագիր կոնդակը։ Այս կարգադրութեան մասին տեղեկութիւն տրուեց նաև պ. Ստեփանեանցին։ 25 մայիսի, թ. 810։

Դիւանի գրութեամբ յայտնուեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին, որ Նորին Վեհափառութիւնը յարգելով նո-

բա միջնորդութիւնը, թոյլ տուաց այսուհետև թողնել Երուսաղէմի ս. Աթոռի մէջ՝ այնտեղի հանգուցեալ միաբանների խաչերն ու պանակէները և խնդրուեց յայտնել այդ մասին Երուսաղէմի միաբանութեան տնօրէն խորհրդին: 25 մայիսի, թ. 812:

Նորին Վեհափառութիւնը ս. Էջմիածնի Սինոդի մայիսի 22-ի թ. 1036 յայտարարութեան վրայ հետևեալ մակագրութիւնն է արել. «Ի նկատի ունենալով, որ առաջնորդների և հոգևոր պաշտօնեաների ճանապարհածախսի պատճառով յաճախ ծագում են տարաձայնութիւններ, պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին շուտով մշակել ճանապարհածախքի համար նոր և լրիւ հրահանգ, հաստատել այն և ուղարկել առաջնորդներին և վիճակային կոնսիստորիաներին ի գործադրութիւն: Հրահանգի մէջ յիշել, որ հոգևոր պաշտօնեաները իրենց պաշտօնական ճանապարհորդութեան մասին պէտք է տեղեկագիր ներկայացնեն Սինոդին և ծախուց ցուցակը, որը Սինոդի կողմից վաւերացնելուց յետոյ կպատուիրուի վիճակային կոնսիստորիաներին վճարել հաստատած ճանապարհածախքը: 29 մայիսի, թ. 824:

Կոնդակ ս. Էջմիածնի Գէորգեան Հոգևոր ճեմարանի վարչութեան անունով, որով հաստատելով մանկավարժական ժողովի որոշումը Մայր Աթոռի միաբան Տ. Աբել աբեղային բարեյիշատակ Ա. Ղուկասեանի կտակագումարի տոկոսներով բարձրագոյն կրթութիւն ստանալու համար արտասահման ուղարկելու մասին՝ առաջադրուեց վարչութեան յայտնել այդ մասին Տ. Աբել աբեղային և տնօրինել արժանը: 21 մայիսի, թ. 827:

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետին Աղէքսանդրապոլի վիճակի հայի Փամբ գիւղի Պօղոս քահանայ Տէր-Յովհաննիսեանի ներկայացրած ձեռագիր աւետարանը խորհրդատետրը և տաղարանը մատենադարանում պահելու համար: 1 յունիսի, թ. 829:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին թեմական դպրանոցաւարտ ուսուցիչ Կարապետ Մարտիրոսեան Յարութիւնեանի վկայականները՝ առաջադրելով կարգադրել ընդունել նրան Մայր Աթոռի միաբանների շարքը: 7 յունիսի, թ. 854:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինօդին բժ. Ա. Տէր-Յարութիւնեանի կտակագումարի գործի առթիւ արած ծախքերը վճարել այդ կտակի հաշուին ստացուած գումարներից, իսկ Ղարսի փոխատու վարկի ընկերութեան մօտ պահ տուած 2760 ր. 21 կ. գումարը կարգադրել փոխադրել Երևան Նորին Վեհափառութեան անունով, որ ստանալուց յետոյ կյանձնի Սինօդին: 7 յունիսի, թ. 855:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Աթոռի Դէորգեան ճեմարանի վարչութեան տալ Պոլսեցի 11 աշակերտներին ճանապարհածախք իւրաքանչիւրին 25-ական ռուբլի, վարչութեան միջնորդութեան համաձայն, ամառուայ արձակուրդին հայրենիք վերադառնալու: 8 յունիսի, թ. 860:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին նօտարական հաւատարմագիր Նորին Սրբութեան անունով, որպէս զի ստորագրի և ստորագրութիւնը Ռուսաց հիւպատոսարանում վաւերացնել տալով, վերադարձնէ, որ Ա. Ղուկասեանի կտակած կայքը հնար լինի վերջնականապէս ստանալ: 9 յունիսի, թ. 864:

Դիւանի գրութեամբ խնդրուեց պ. Սամսոն Յարութիւնեանին յետ ուղարկել Նորին Վեհափառութեան Ա. Ղուկասեանի կտակի գործը խաղաղութեամբ վերջացնելու առթիւ կազմած արձանագրութիւնը: 10 յունիսի, թ. 870:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երևանի փոխթեմակալին շուտով ուղարկել Կարմիր վանքի վանահօրից ստացած ձեռագրերը: 10 յունիսի, թ. 871:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Ուստրի Հայոց ազգային կենդրոնական վարչութեան Կ. Պոլսի Հայոց Պատրիարքից ստացած Սահակ Կոշկարեանի կտակի բնագիրը՝ յանձնարարելով հետևել և միջոցներ ձեռք առնել իրագործելու այդ կտակը: 10 յունիսի, թ. 874:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Վրաստանի թեմի առաջնորդին Եկատերինէ Նաղիրեանի կտակի ներկայ գրութեան մասին մանրամասն տեղեկութիւն տալ՝ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին հաղորդելու համար: 11 յունիսի, թ. 880:

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Մ. Ա.թոռի Տպարանի վարչութեան Վանայ առաջնորդական տեղապահի ուղարկած երկու օսմ. ոսկու փոխանակագիրը: 11 յունիսի, թ. 893: